ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

---

«15» օգոստոսի 2022թ. № Ա2/945-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով, 3-րդ, 10-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով ծառայողական քննություն անցկացնող աշխատանքային խմբի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գնումների կազմակերպման և վարչատնտեսական ապահովման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ Անի Գեղամի Ղարիբջանյանի նկատմամբ կիրառել «Նախազգուշացում» կարգապահական տույժը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ